



ԽԱԺԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Յանուն Հօր, եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Ամէն»:
Սիրելի ժողովուրդ Հայոց,

Մօտ երկու հազար տարի առաջ՝ Պաղեստինի աննշան Բեթլեհէմ քաղաքին մէջ մանուկ մը ծնաւ: Այս դէպքը, որուն՝ իր ժամանակին պատմական որեւէ նշանակութիւն չընծայուեցաւ, Քրիստոնէական աշխարհի ուշադրութեան առանցքը դարձաւ: Հայ հաւատացեալ մատենագիրը այս դէպքը կը նկարագրէ հետեւեալ բառերով. «Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից ընդ Միածին թագաւորին, որք երգէին եւ ասէին.—Սա է Որդին Աստուծոյ»:

Երկինքի հրեշտակները երկիր առաջնորդող միջադէպը Բեթլեհէմի մէջ Յիսուս Քրիստոսի ծնունդը եղաւ: Բանն Աստուծոյ, որ զգեցաւ համեստ եւ քիւրաքեկ բնութիւնը մարդկութեան, ողջագործուեցաւ այս երկրին հետ եւ զայն դարձուց մէկ մասը երկնքի թագաւորութեան, եւ այս ապակաւած, մեղաւոր աշխարհը վերածուեցաւ դրախտավայրի եւ լեցուեցաւ Տիրոջ փառքը հիստղ երկնային ձայներով:

Ամէն տարի երբ կը տօնենք Յիսուս Քրիստոսի ծնունդն ու Մկրտութիւնը, չենք յիշատակեր միայն անցեալին պատահած պատմական իրադարձութիւն մը, այլ ամէն Յունուար 6-ին, Ս. Զատկի Կիրակիին եւ այլ տէրունական օրերուն մենք շեշտը կը դնենք մեր Տիրոջ կեանքին հետ կապուած եւ համաշխարհային կարեւորութիւն ներկայացնող այնպիսի գլխաւոր դէպքերու վրայ՝ որոնք մենք քրիստոնէականներս կրնանք կեանքի կոչել ամէն Կիրակի եւ ամէն օր: Որպէս քրիստոնէականներ մենք միշտ կը փորձենք հետեւիլ Քրիստոսի քայլերուն՝ զի որպէս Տէրը բնակութիւն հաստատէ մեր մէջ եւ մեր մարմինը դառնայ մեր հոգիին տաճարը:

Եկեղեցին, որ մարմինն է մարմնացեալ Բանին Աստուծոյ, երկնքի թագաւորութիւնն է երկրի վրայ: Մենք պէտք է իրաւ քաղաքացիները դառնանք այս թագաւորութեան եւ ծառայենք մեր Արարչին՝ ընկերակից դառնալով երկնային հրեշտակներուն: Ամէն անգամ որ կ'երգենք «Սուրբ Աստուած»-ը, մենք կ'աղօթենք Աստուծոյ՝ որպէս զի մեզ արժանի դարձնէ երկնքի հրեշտակներու խումբին դասուելու պատիւին: Մենք բախտաւոր

Աստուծոյ Շնորհքը կը ստանանք խորհրդակատարութիւններու շնորհիւ: Ինչո՞ւ մենք զմեզ կը զրկենք այն պարգեւներէն՝ որոնք մեզի շնորհուած են Տիրոջ կողմէ, եւ հետեւինք կրօնքներու եւ յարանուանութիւններու՝ որոնք կը ստորագնահատեն մեր կրօնական եւ ազգային ինքնութիւնը: Մեր եկեղեցիին շնորհիւ մենք դարձած ենք Աստուծոյ շատ ավելի մօտիկ ժողովուրդ մը. սակայն ոեւէ մէկը չի կրնար նոյնը ըսել այլ հայկական յարանուանութեանց մասին: Հայաստանի ազգային եկեղեցին եղած է նաեւ Մայր Եկեղեցին բողոքական եւ կաթողիկ հայերու եւ իր հոգեւոր պաշտպանութեան ներքեւ առած է աշխարհի բոլոր հայերը, անոնք ըլլան հաւատացեալներ, անհաւատներ կամ անաստուածներ: Անոնք բոլորը Տիրոջ զաւակներն են, եւ Հայց. Եկեղեցին հաւատքի սերմերը ցանած է նոյնիսկ այսպէս կոչուած անհաւատներու եւ անաստուածներու զաւակներու հոգիներուն մէջ:

Կ'աղօթենք որ հայրենի մեր եղբայրներն ու քույրերը իրենք զիրենք չօտարացնեն եւ չհեռացնեն իրենց մայր եկեղեցիէն, եւ մենք բոլորս մեր կարելին պէտք է ընենք օգնելու մեր հայրենակիցներուն որպէս զի անոնք իրենց կապերը չխզեն մեր հայրերուն Աստուծմէն եւ մեր եկեղեցիէն:

Կ'աղօթենք նաեւ որ Տէրը քաջատոյժ եւ արեւշատ տարիներ պարգեւէ մեր եկեղեցոյ Հոգեւոր Պետին՝ Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Վազգէն Առաջին Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի ծնունդը միշտ կը ներկայացուի որպէս աշխարհի վրայ խաղաղութեան հաստատման հետ աղերս ունեցող երեսոյթ: Առաջին անգամ այս աւետիքը հրեշտակներու հոյւերը տուին հովիւներուն՝ Բեթղեհէմի մօտ, երբ Փրկիչը ծնաւ: Այդ խօսքերը Ղուկաս Աւետարանիչ կ'աւանդէ, եւ Եկեղեցին ամէն առաւօտ կ'երգէ զանոնք. «Փառք ի բարձունս Աստուծոյ՝ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Խաղաղութիւնը մեր Տիրոջ կտակն էր իր աշակերտներուն, եւ անոնց միջոցով՝ մեզի: Իր յաւիտենական պատուիրանն է «Խաղաղութիւն կը թողում ձեզի, Իմ Խաղաղութիւնս կու տամ եւ ձեզի. ինչ որ աշխարհս կարող չէ տալ՝ ես կու տամ ձեզի» (Յվհ. ԺԴ, 27)

Այսօր, աւելի քան երբեք պէտք ունինք Անոր խաղաղութեան: Պատմութիւնը կը փաստէ, որ մարդոցմէ հաստատուած խաղաղութիւնը շատ դիւրաւ կը խախտի: Իսկ մեզի նման փոքր Ազգի մը համար խաղաղութիւնը գոյատեւութեան երաշխիք է: Այս տարի մասնաւորաբար աղօթենք որ Տէրը մեզի պարգեւէ իր խաղաղութիւնը ամբողջ աշխարհի տարածքին: Զերմեռանդ սրտով կ'աղօթենք Հայաստանի նոր Հանրապետութեան քաղաքական, ընկերային և տնտեսական հաստատութեան համար:

Կը խնդրենք Արցախի մեր ազգակիցներէն որ իրենց յոյսը մանաւանդ Աստուծոյ մէջ խարսխեն: Աստուծոյ ներկայութիւնը թող անգամ մը ևս ծաղկի աշխարհի տարածքին ապրող Հայ սրտերու մէջ:

Աստուած մեզի հետ ըլլայ միշտ: Իր հզօր Աջը թող պահպանէ մեր ժողովուրդը թէ՛ Հայրենի հողին վրայ և թէ՛ ամբողջ արտասահմանի տարածքին, առատացնելով հաւատացեալները մշտանորոգ եռանդով և Ծննդեան բերկրութեամբ, որպէսզի ծառայենք իրեն: